

ԿԼՏՐԻՃ՝ ԿԵՆՕՔ ԹՈՂԻ ԶԱՅՍ ԿԵԱՆՍ
ԾԱՆԿԵԱԼ ԵՂԷ ՆԵՐ ՀՈՂՈՑ ՏԵՆ
ՈՐՔ ՀԱՆԳԻՊԻՔ Ե ԵՌԻ ԴԱՄԲԱՆ
ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻՍ ԼԻՆԲԵՐԱՆ

ՌՄԼ ԿԵՍՄԻՐԻ ՄԵԿՆ

3.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ
ՈՐՈՒՇՈՒՑԻ ԽԱՐԱՎԱՆՔԵԱՆ
ՄՀՏՄԻ ՄԿԲՏԻՉԻ ԿՈՂԱԿԻՑ ԲԱՐՕՆ
ԽԱՐՈՒՆԻՍ ՈՐ ՀԱՆԳԵԱՆ

ՌՄԼ ԿԵՍՄԻՐ ՕԳՈՍՏՈՒՍ ԻԷՒՆ

4.

ԸՍՏ ՀՐԱՄԱՆԻ ՏՆ ԱՐԱՐԻ
ԻՋ Է ՀՆՁԱՆ ՍՈՒՆ ՏԱՊԱՆԻ
ՈՐ ԷՐ ՊԱՐԿԵՇՏ ԵՒ ԳՈՂԱԼԻ
ՊԱՐՕՆ ՕԼԱՆՆԵՍ ՀԱՅԱՀՈՒԻ
ՊԷԵԲԷԼԵՆՍ ՄՀԻ ՄԿԲՏԻՉԻ ՈՐԻ
ՈՐՔ ՀԱՆԳԻՊԻՔ Ե ՍՈՒՆ ՏԱՊԱՆԻ
ՄԻ ԶԱՆԶՐԱՆԱՔ ՏԱԼ ԶՈՂՈՐՄԻ
ԹՎԻՆ ՌՄԼ ԿԵՍՄԻՐ ԺՋԻ

5.

ՀՈՂԱՆԻԹԵԱՆ ՅԱՅՍ ԴԱՄԲԱՐԱՆ
ՄԱՐՄՆՈՑ ՄԻԱՅՆ ՍԱ ԿԱՅԱՐԱՆ
ԸՍՏ ԶՈՒՈՐ ԲԱՆԻՆ ՏՈՐԱՎԱՆ
ԵՄՈՒՆ ՅԱՐԱՆՍ ՍՈՒՆ ԳԵԲԵԶՄԱՆ
ԱՅՍ. ՀԱՃԸ ՊԱՐԿԻՐ ՈՐԻ
ԱՆՈՒՄԻ ՀԱՃԸ ԱԼԹԵՆ ԿՈՒԻ
ՈՐ ԷՐ ՊԱՐԿԵՇՏ ԵՒ ԳՈՂԱԼԻ
ԲԱՐԻ ՄԱՀՈՒՄԻ ԱՆՈՒ ՏԵՐ ՓՈՒԻ
ԴՈՒՔ ՀԱՆԳԻՊԻՔ ՍՈՒՆ ՏԱՊԱՆԻ
ԼԻՆԲԵՐԱՆ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻ
ԹՎԻՆ ՀԱՅՈՑ (ՌՄԼ) ՄԱՅՍ Ժ.

6.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵ
ԱՆ ՊԷԵԲԷԼԵՆՍ ՄՀԻ
ԱՍՏՈՒՐԻ ՈՐԻ ԿԱՐԱ
ՊԵՏԻՆ ՈՐ ՓՈՒՆՑԱՆ (ՌՄԻՐ)
ՅՈՒՆԻՍԻ ԺԱ.

7.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵ
ԱՆ ՊԷԵԲԷԼԵՆՍ ԳԻՐԳ
ՕՐԻ ԴՈՒՄՏՈՒՐ ԴԱՅՁԷԿԻ
ԻԼԻՆ. ՈՐ ՓՈՒՆՑԱՆ ՌՄԻՐ
(ԸՐԲԱՆԻՅԻ).

ՄԱՅՆԱԽՈՍԱԿԱՆ

Պրոֆ. Ն. Յ. ՄԱՐԻ ՆՈՐ ՈՍՏԱՆԱՍԵՐՈՒԹՅՆՆԵՐԸ:

Ա. 1. Камень съ армянского надписью изъ АНН въ Asiaticкомъ Музеѣ т. 2. Надпись Епифанія, Католикоса Греческаго (изъ раскопокъ въ АНН 1910 г.) (Արտասպար-
թիաներ Ս. Պետրոսոպոլի Գիտութեան Հիմարանի
Տեղեկատուից 1910թ.)

Պետերբուրգի Համալսարանի Արեւելեան
ճիւղի պրոֆեսոր, իսկ վերջերս նաեւ գիտու-
թեանց ճեմարանի անդամ Ն. Մարո ծանօթ է
Հայութեան լայն շրջաններին գլխաւորապէս
Անիում կատարած իր պեղումներով: ԱՅ քանի
տարի է անընդհատ իւրաքանչիւր ամառ գալիս
է նա Ախուրեանի ափերը՝ Բագրատունեաց մայ-
րաքաղաքի բեկորների տակից Հայութեան Հին
կեանքը յոյս աշխարհ Հանելու Համար: Զարմա-
նալի տոկոնութեամբ նա առաջ է տանում այդ
աշխատութիւնները եւ իր ոգեւորութեամբ կա-
րողանում է յափշտակել նաեւ իր աշակերտ-
ներին շատերին, որոնք նրա օրինակով իրախու-
սուած՝ բաժանում են նրա Հետ պեղումների
բոլոր դժուարութիւնները: Յոյս կարելի է ու-
նենալ, որ այդ նոր ուժերի աշակերտեամբ
Պրոֆ. Մարո պիտի կարողանայ իրականացնել
այն ընդարձակ ծրագիրը, որ մշակուած է եղել
այդ հնագիտական հետախուզութիւնները սկսե-
լուց առաջ:

Արարտեան դաշը Ռուսական տիրու-
պետութեան տակ անցնելով, Հայաստանի Հին
մայրաքաղաքները՝ Երասաւը, Գուինը, Վա-
ղարշապատը, Երուանդաւաթը, Բագարանը, Անի
պիտի բնականօրէն արեւորեին ռուսական գիտ-
նականների հետաքրքրութիւնը, եւ ռուսական
արեւելագիտութեան մանկութեամբ միայն պէտք
է բացատրել այն հանգամանքը, որ պեղումները
այդ վայրերում այսպէս ուշ են սկսուել: Այդ-
տեղ թաղուած են ոչ միայն վերջին ժամա-
նակաշրջանների մահմադարական թուրք եւ արա-
բական աշխարհակալութեանց հետքերը, այլ
դարաւոր փոյնների տակ ծածկուած ձուռն է
նաեւ աւելի Հին՝ պարսկական, բիւզանդական,
հռոմէական, պարթեւական, նոյն իսկ իսլամական
քաղաքակրթութեանց ազդեցութեան փաստերը:
Պեղումները այդ կողմերում պիտի լրացնեն եւ
յաճախ բաղորդին այլ գոյնով լուսաւորեն Հայոց
պատմութեան այնպիսի շրջաններ, որոնց մասին
կամ գրաւոր տեղեկութիւններ չառ ի՞նչ ու-
նինք, կամ մինչեւ այսօր իսկապէս ոչինչ չը
գիտանք: Պրոֆ. Մարո սկսած գործը գիտական

աճադին կարեւորութիւն ունեցող մի ընդարձակ ձեռնարկութեան առաջին մասն է, որը անդնա-
հատական նիւթեր է խոստանում լոյս հանել մեր
երկրի անցեալի ճիշդ վերապատկերացման հա-
մար:

Որտեղից պէտք էր սկսել պեղումները,
հնամենի շրջանների քաղաքակրթական կենդրո-
նից, թէ հակառակ ուղղութեամբ, աւելի նոր
պատմական շերտերից. — ահա մի հարց, որ
անհրաժեշտօրէն պիտի կանգնէր Պրոֆ. Մառի
առջև, երբ նա ձեռնամուկ էր լինում Արա-
րատեան դաշտի հնութիւնների սխտեմատիկ
յայտնագործութեանը: Այդ հարցը նա լուծեց
այն իմաստով, որ պիտի աւելի մօտիկ, ուստի եւ
աւելի հասկանալի ու իր ոգով աւելի մեզ հա-
րազատ ժամանակաշրջանից սկսել եւ անցնել
հնադհուտ աւելի հնադրններին, հոգեբանորեն
աւելի դժուար մեկնելներին: Ահա թէ ինչու
նա իր հետախոյզ բանը տարաւ նախ Անի, ոչ
թէ օրինակ՝ Արտաշատ կամ Երուանդաշատ,
կամ Արմաւիր:

Անիի պեղումները արդէն շատ նիւթ
տուին թափաղարկութեան պատ-
մութեան համար: Ափսոս որ մինչեւ այսօր մի
ամփոփ աշխատութեան մէջ դեռ չեն հաւա-
քուած այդ բոլոր գիտութիւնը, առ այժմ ապա-
գրուած են մասնակի ուսումնասիրութիւններ,
որոնք սակայն չուսում հնարաւոր են դարձնելու
որոշ ընդհանուր եզրափակումներ անել: Գի-
տերից մի մասը ճշգրտում է մի քանի մանր
պատմական իրողութիւններ: Օրինակ՝ Անիի ար-
ձանագրութեանց եղանակի մերձաւոր ծանօթու-
թիւնը թելադրել է Պրոֆ. Մառին մի նոր ըն-
թերցում առաջարկելու այն արձանագրու-
թեանը, որը 1845 թուին Արիւր գտել է
Անիում, եւ որը այժմ գտնուում է Պետերս-
բուրգի Ասիական թանգարանում: Բրտեն այլ
կերպ կարգալով այդ արձանագրութիւնը՝ կար-
ծում էր թէ Անիի դռներից մէկի բուրգերը
կոշտելիս են եղել «Կե բուրգեր»: Այժմ
Պրոֆ. Մառը նոյնը կարգում է այսպէս.

«| ԹՎ ՌԾԵ ՀՆՈՐՀԻՒ Ո | ՂՈՐՄՈՒԹԻՐՆ
ԱՅ ՀԱՆԵՑ | ԱՍ ԴՈՒԹԻՐՆ ԵՒ ԲԲԶՆԵՐՄ | ՅԱ-
ՆՈՒՄ ՄՄԵՆԴԱՅՈՐԹԱՒ | ՈՒՑՈՒՄ ՀԱՆԵՐԶԱԶ
ՋԱԲ | ԱՐԻՒԻ | Ե ԶԵՈՒՄ ԶՈՒՆԴԱՆՍԵՒ ԵՂԵԻ |

Այս շինութիւնը լինում է 1206 թուին,
ուրեմն սա առաջին վիպյութիւնն է Անիի ամ-
բութիւնների Պարաշինութեան մասին քաղա-
րայի արով. Պրոֆ. Մառը հաւանական է հա-
մարում որ քունդիկը եղել է ոչ թէ արձանա-

գրութեան փորագրիչը կամ շինութեանց ճար-
տարագետը, այլ «մանդատորթա-խոյզեր»,
կամքի հատարողը: Երկու տարի յետոյ՝ 1208 թ.
Ջաքարեան շինում է արդէն Գայլեձորի կողմի
քաղաքային պարիսպների մասը:

Բայց կան դիտեր, որոնք աւելի ընդհա-
նուր նշանակութիւն ունին եւ կարեւոր ձեռնու-
թիւններ են տալիս Անիի բուն ներքին Կեանքի
մասին: Այսպէս՝ Անիի վրաց եկեղեցու պակա-
սաւոր արձանագրութիւնը լրացնելու համար՝
1910 թ. Պրոֆ. Մառը սկսել էր պեղումներ
այդ եկեղեցու պատի տակ: Մահմադինի այդ-
վրացական արձանագրութիւնը (1288 թ.) ոչ
մի յաւելում չէ ստացաւ այդ պեղումներից,
սակայն հողի տակից դուրս եկան մի այլ ընդար-
ձակ արձանագրութեան քարեր, որը բրտած է
նոյնպէս վրացերէն, միայն վերջին տողն է հայե-
րէն: Արձանագրութեան մէջ վրաց կամոդիկոս
Եպիփանէսը [«այս գրեցի եւ իմ ձեռքով, երբ
օծեցի Անիի եկեղեցիները»] միջամտում է վրա-
ցածէս քահանաների եւ ծխականների մէջ ծա-
գած վէճերին: Եկեղեցականների պահանջած
տուրքերը այնքան մեծ են եղել, որ դժգոհու-
թիւն են առաջ բերել ժողովրդի մէջ: Նոյնը
նկատուի էր եւ հայկական համայնքի մէջ, այն-
պէս որ դեռ մի տարի առաջ 1217 թ. Անիի
Գրիգոր Եպիփանէսը ազատել էր ծխականների
Ջատիկն առաջնորդին մատաղի մորթին առյու-
պարտականութիւնից, Նոյն տեսակ վէճեր այժմ
սկսուել էին եւ վրացական արձանագրութեան
մէջ, որը ոչ միայն մատաղի մորթին չէր ուղու-
տալ հոգեւորականներին, այլ եւ առհասարակ
որեւէ վարձ վճարել ծխականաւորութեան հա-
մար, Եպիփանէս կամոդիկոսը աշխատում է
կողմէրը հայաշենքի: Մատթէոսի Ժ, 8. խօսքերը
բերելով՝ նա առում է քահանաներին որ գայ-
թակղութեան պատճառ չը դառնան ժողովրդի
համար եւ առաքելային պատուիրանը չը խախ-
տեն: Անկանոն բան է պագագրութեան համար
տանել 100 դրամ [ըստ Ջաւահիրով «գրամ»,
6 = դանգի, իսկ դանգը = 7.5 կոպէկի], կա-
թոդիկոսը ճշգրիտ նշանակում է տուրքերը
(գոթախոսարար հէնց թուերը արձանագրու-
թեան մէջ մեծ մասամբ գովառուոր են) եւ դի-
մում է ապա քաղաքում ապրող վրացիներին
եւ յորդորում է չը դժգոհել այդ տուրքերի
համար, «քահանաներից ձեռք համար՝ աղօթքն
է եւ պաշտմանաւորութիւնը. մի նեղանքը
նրանց՝ ձեռներեցի կանոն տալուց: Միտանալ
տուէք ուրախութեամբ, առանց ստիպման»:

վերջն էլ աւելացնում է որ մաստաղի մորթին ոչ թէ ամբողջովին, այլ միայն նրա մի երկար շերտը պիտի տրուի քահանաներին:

Արձանագրութեան տակ հայերէն փորագրուած է

ՅՈՒՆ. ՈՒԷ (667 = 1218) ԵՍ ՏԵՐ ԳՐԻԳՈՐ ԻՐ(ԻՅԱՊԵՏ ԵՊԻՍ)(ՍԱՊ)ՈՍ. ԵՍ ՎԱՀՐԱՄ ՍՄԻՐՆԵՑ ԲԱՆԱԿԱՆ ԵՍ ԿԱՐԱՊԵՏ. ՈՐ ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆ ԶՐԱՄԵՆԻ ԵՍՁ...

Պրոֆ. Մառ այս արձանագրութեան մէջ ուշադրութիւն է դարձնում այն կէտի վրայ, որ վրաց կաթողիկոսի հրամանի տակ կայ տեղական հայ եպիսկոպոսի եւ ափրայի «վկայեմք»։ Արդեօք զո սոսկ մի վկայութիւն է որ հրամանը իրօք վրաց կաթողիկոսին է, թէ գուցէ իրենց ստորագրութեամբ այդ պաշտօնատարները վաւերացնում են եւ հաստատում են կաթողիկոսի կարգադրութիւնը — այս հարցը պարզելու են միայն նոր ուսումնասիրութիւնները:

Միւս կողմից այստեղ առաջին անգամն է յիշուած Եպիսկոպոսի կաթողիկոսի գործունէութիւնը: Մինչեւ օրս վրաց կաթողիկոսների մի քանի մէջ է գտնուած Եպիսկոպոսի անունը, որի գլխաւոր հրատարակիչը դրել է «Եպիսկոպոսն» անոյթը, ծանօթութիւնը: Այժմ արձանագրութիւնը մի քիչ լոյս է սփռում այդ եկեղեցական պետի գործերի վրայ:

Բայց ի հարկէ արձանագրութիւնը հետաքրքրական է գլխաւորապէս ուրիշ տեսակետից թէ ինչ յարաբերութիւններ էին ծագարի սկզբում հայաքանակ ժողովրդի ու հոգեւորականութեան մէջ: Դա մի փոքրիկ արձագանք է այն դժգոհութիւնների, որ հետզհետէ աւելի ու աւելի ուժգին կերպով հնչում են՝ սկսած թ. դարի վերջերից: Պեղումները գալիս են լուսաբանելու այդ երեւոյթը, որը շատ նշանակալից էր ժամանակի հասարակական հոգեբանութեան համար:

Առ հասարակ Անիի պեղումները օգնում են մեզ աւելի խոր հայեացք նետելու այն ժամանակուայ քաղաքացիութեան ներքին հանգամանքների մէջ: Արդե՞ն գտնուում են ապացոյցներ, որ քաղաքը ուներ իր բնորոշ ներքին կարգ ու կանոնը, որ սիրով աւատականութեան կից արդէն կազմակերպուել է ձգտում քաղաքացի դասակարգը եւ սկսուում են նրա առաջին կռուի փորձերը թէ նախարարական եւ թէ եկեղեցական ձեւման դէմ: Նրա կանոնը իր առօրեայ յոյժերով արդէն երեւան է գալիս

աւերակների տակից: Անիի Հնագիտական Ինստիտուտի հաստատունելոց յետոյ պիտի սպաւ սեղ որ այդ ուղղութեամբ հետախուզութիւնները կը ստանան աւելի լայն ծաւալ ու կը դրսեւան աւելի բազմաթիւ աշխատող ուժերի մասնակցութիւնը:

(Հրահանգներ)

ՍՏԵՓԱՆ ԼՍՍԻՍԵԱՆ



Ն. ՄԱՌ. Ուղեւորութիւն դէպի Ցամաքական Լազիստան.

1909 Օգոստոսին ձեռնարկած էր Պրոֆ. Ն. Մառ ուղեւորութեան մը դէպի Ցամաքական Լազիստան՝ հնախօսական յատկապէս լեզուագիտական հետազոտութիւններ կատարելու նպատակաւ: Լազերէն քերականութիւն մը առ այժմ միակ արդիւնքն է այս ուղեւորութեան: Մառ իր ծանապարհորդական յուշատետրին մէջ ընթերցողաց առջեւ նորանոր հորդոյններ կը բանայ Լազերու թէ ներքին եւ թէ մանաւանդ քաղաքական կեանքի հայդը: Յայտմ մեր գնահատումն այնու մանաւանդ բարձր է մեծանուն գիտնականին հանդէպ, որ Սեւ Նոյովու ամենց վրայ թաքնուած այս հետաւոր խուրձանիւնը ցայտօր շատ քիչ գիտնական ուղեւոր հիւրընկալած էր իր հողին վրայ, հակառակ այն կարեւորութեան, որ ունի այս կողման ժողովրդեան անցեալ կեանքը վրաստանի, մասամբ նաեւ Հայաստանի պատմութեան հետ սերտ յարաբերութեան պատճառաւ:

Արացիք Լազերը կ'անուանեն չաւ-էքի (-էքի յոք. ձեւ). չաւ բառին արմատը Մառ կը ստուգաբանէ Կաւ, այսինքն Կաւ, որ ի կարգին նոյնպէս անանց մ'է, կ'ըսէ, Ս. Գրքի մէջ յիշուած միտաղագործութեան գտնին՝ Թովթաղ Կայենի անունն երկրորդ կէսին:

Բաց աստի՝ Մառ վրական եկեղեցական մասնագրութեան մէջ տեսնելով լազարաւորութիւն եւ Իվերական (իմա՝ միւնիքիան) լեզուի ազդեցութիւնը, այնուհետեւ վրաց վրայ յոյն-բիւզանդական ազդեցութիւնը անդադարէն հաւատարմութեամբ քննելու կ'առաջնորդուի. որով այն եզրակացութեան կը հասնի թէ «յուսական ազդեցութիւնը ընդհանրականացնողները եթէ ոչ բացարձակ չափով, գոնէ մեծաւ մասամբ Լազերէն սերած գլխաւորներն եղած են,